



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2206

4Lⁿⁿ-9-L.



Philippines
1886

2011

14156

4-3

7-66

ՎԵՐՏՈՒՆ ՀԵԽԳՈ

205

ԿԼՕՓ ՊԵՅ

Թարգմանութիւն

ԱԳԵՔՈԱՆԴՐ ԱԲԵԼԵԱՆՑԻ

2003

ԹԻՖԼԻՇ

ՏՊԱՐԱՐԱՐԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՈՒՅԻ

ԹԻՖԼԻՇ ՓՈՎՈՅ № 1 | 2

1886

Արքայի ջուրագույշ

84-3
2-66

ԿԼՕՓ ԳԵՐ

ՎԻՔՏՈՐ ՀԻՒԳՈՒ

1001
2092

Թարգմանութիւն

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼԻԱՆՑԻ.

9

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՃԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԱՑԻ
ՕՐԵԼԵԾՆ ՓՈՂՅ Խ 1/2

1886

2604

Օ Գ Գ Պ Ո Լ Ի

Ա Պ Հ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

— — — — —

1886
Дозволено цензурою. Тифлисъ, 16 Мая 1886 года.
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2

1886

1886

Ն Ո Ւ Ե Ր Բ Ա Դ Ո Ւ Ո Ւ Մ

Պ. Ը Ա Հ Գ Ե Դ Ա Ն Ե Ա Ն Ց Ի

Ե Ր Կ Ա Թ Ի Գ Ո Ր Ծ Ա Բ Ա Ն Ի

Հ Ա Յ Գ Ո Ր Ծ Ա Վ Ա Ր Ն Ե Ր Ի Ն .

Ի բ ա ն ց գ ո ր ծ ա կ ի ց ը ն կ ե ր

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ղ Ի Ց

ՅԱՌԱՋԱԲԱՆ

առնելով զարդ մօքան առաջ պատահելող
առջի պահի մասն ըլքի գոյր խոր ոճ
ուր և սիրու վաճառած ունեն խոյն
մատիկապատճեն առաջ առաջ առ առ առ
և մայդանիարան և մայզըր և նահեծան և

Սրանից 52 տարի առաջ, այն է՝ 1834
թվին, Ֆրանսիայում գուրս եկաւ «Կլոդ Գեօ»-ն
աշարհահռչակ Վիքտոր Հիւգոյի գրչի տակից,
իւր նմանի մէջ առաջինը, որ բողոքում է ա-
ւազակների գրութեան մասին, արդարացի մե-
ղադրելով հասարակութիւնը և գիտութեան
ծուռ ուղղութիւնը՝ իրեւ բոլոր չարեաց ծնող-
ներ։ Բայց 52 տարուայ ընթացքում Ֆրան-
սիան շատ փոփոխութիւններ է նույրել իւր հա-
սարակական կեանքի և գիտութեան մէջ։ Գու-
ցէ և Վիքտոր Հիւգոյի հասարակութեան վե-
րայ բարձած մեղադրանքը ու գանգատը, որ
նա յալտնում է այս գրքի մէջ, արդէն հնա-
ցել է։ Բայց մեզ, Կովկասցիներիս, համար եր-
բէք այդ գիրքը հին չէ, և երկար հին չէ լինելու,
քանի որ Թիֆլիսը, Ճամախին, Ճուշին և բո-
լոր Կովկասեան գաւառները լցնում են բանտե-
րը ամեն օր նորանոր Կլոդ Գեօներով։ Վասն-
որոյ, վստահութեամբ առաջարկելով ընթերցող
հասարակութեան այս գիրքը, թողնում եմ նրա
ուշիմ հայեցողութեան՝ քաղել նրանից այն բա-

ըովիմաստը, որը անմահ չիւգօն իւր հանճա-
րեղ գըռով գըքի սկզբից մինչև վերջը թա-
փելով, ամեն մէկիս մտածել է տալիս և հա-
մոզում, թէ արդարեւ ինքը հասարակութիւնն
է ստեղծում և գողերին, և աւագակներին, և
մարդասպաններին:

Եւ աւելի խոր մտածողը կ'տեսնէ, որ ինքը, նոյն իսկ հասարակութիւնն է նոյնպէս այն բժիշկը, որ կարող է բժշկել ամեն մի թշուառի և դադապարտեալի ցաւերն ու վշտերը:

U_L , U_F .

፩፻፭፻

1886 Ե. ԳԵՄՐ. 25.

ԿԼՈՐ ԳԵՕ.

Եօթ—ութ տարի սրանից առաջ Փարլիզում
ապրում էր մի մարդ, կլող Գեօ անունով, իւր
սիրած կնոջ և իւր փոքրիկ աղջկայ հետ միա-
սին:

Կ'նկարագրեմ ինչպէս եղել է. թող ընթեր-
ցողը իւր բոլոր կարդացածից դուրս բերի բա-
րոյիմաստ:

Արհեստաւոր կլօդ Գեօն ընդունակ, հմուտ
և նրբամիտ մարդ էր: Նա անկիրթ էր, բայց
քնութիւնից առատ օժտուած, կարդալ և գրել
չը գիտէր, բայց լաւ մտածող էր:

Զմեռը յանկարծ մնում է անդործ. խրճի-
թումը ոչ կրակ կայ ոչ հաց. արհեստաւորը,
կնիվկը և երեխան մեռնելու մօտ են: Կոյուք դի-
մում է գողութեան և գողանում է. ինչ և որ-
տեղ—չդիտեմ: Գիտեմ միայն, որ կինը և երե-
խան երեք օր կուշտ էին, վառարանի առաջ
տաքանալով, և որ սրա համար արհեստաւորը
ամբողջ հինգ տարի բանտի մէջ չարչարվեց:

Կլողին ուղարկեցին Կլերվօ: Կլերվօն՝ ա-

ուաջ վանք է եղել, այժմ բանտի վերափոխած.
Նա եղել է Աստուծոյ տաճար—այժմ փոսի վե-
րափոխուած, այդ սուրբ սեղանը՝ այժմ խայտա-
ռակ սլւնի վերափոխուած:

Կլօդին տեղաւորում էին գիշերով բանտում,
խև ցերեկով պատուիրում էին գործել արհեստա-
նոցում:

Կլօդ Գեօն, լինելով ազնիւ արհեստաւոր խև
այժմ՝ գող, արժանաւոր և լուրջ մարդ էր: Նա
գեղեցիկ էր. նրա լայն ճակատը պատել էր կըն-
ճիռներով, և չ'նայելով նրա երիտասարդութեան,
նորածիլ սպիտակ մազերը անհետանում էին սև
խիտ մազերի մէջ: Նրա աչքերը նայում էին հեզու-
թեամբ աղեղնաձև յոնքերի տակից. Նա ունէր
բաց քթածակեր, գուրս ընկած կզակ և պոռշների
վերայ արհամարհական արտայալութիւն: Տես-
նենք հասարակութիւնը վերջը ինչ շինեց նր-
բանից: Կլօդը խօսում էր քիչ, շարժմունքներ
էր անում քիչ, բայց նրա մէջ կար մի ինչոք
վսեմական, ինչոր խոնարհուել ստիպող զօրու-
թիւն: Նա մտածող էր, լրջամիտ, երեւում էր
որ չէր տանջվում, բայց այդ միայն երեւում էր:
Կլերփոյի արհեստանոցների տեսուչը էր մի
անձն՝ նման և վաճառականի և աստիճանաւոր-
քի. մի բանտապետ՝ բանտարկեալին գործ տուող
և բանտարկեալին ճնշող, մի ձեռով արհեստա-

ւորին գործիքներ արձակող, իսկ միւսով ձեզ
շղթաների մէջ բևեռող: Այդ տեսուչը ներկա-
յացնում էր իրանից հեղութեան և քարասրտու-
թեան մի խառնուրդ. իւր գաղափարներին խո-
նարկուող, ամուր ձիգելով իրաւոնքի սան-
ձերը, 'ի միջի այլոց՝ ընկած տեղը լաւ ընկեր,
եօն prince, ուրախ խօսակից, աւելի խիստ,
քան անսասան, ոչ ոքի հետ շատ չերկարաբա-
բանող, մինչև անդամ ինքը իւր հետ երկար ըլ
դատող, լաւ հայր, լաւ ամուսին՝ որ 'ի հարկէ
պարտաւորութիւն է և ոչ առաքինութիւն, մի
խօսքով, ոչ չար, այլ անպիտան: Սա այն մարդ-
կանցից մէկն էր, որոնք ոչնչից չեն շարժվում,
դիւրակոր չեն, որոնք բաղկացած են ամենա-
մանը անկենդան մասնիկներից, որոնք չեն հե-
տաքրքրվում ոչնչով, որոնց չէ դղրդում ոչինչ
զգացմունք, որոնց զայրութը սառցալին է, ատե-
լութիւնը՝ խիստ, ցառումը՝ անխոռով. նրանք բո-
ցավառվում են առանց տաքանալու: Նրանց մէջ
ջերմութեան աստիճանը հաւասարվում է զրօյի:
Նրանք, կարծես, փայտից ստեղծուած են, մինչ-
դեռ մի ծայրը այրվում է, նրանց էութեան
միւս ծայրը մնում է սառը: Այդ մարդու զլիա-
ւոր զիծն էր զիմացկունութիւնը, նա դրանով
հպարտանում էր, նմանեցնելով իրան նապա-
լէօնին: Բայց այդ միայն տեսական խափուստ էր:

Հատերն են գտնվում այդ մոլորութեան մէջ.
չէ՞ որ ճրագը մի յայտնի հեռաւորութիւնից ըն-
դունում են աստղի տեղ. այդպէս էլ դիմաց-
կունութիւնը շատերը ընդունում են կամքի ոյ-
ժի տեղ: Երբ այդ մարդը ենթարկվում էր չոմ-
տի ոյժին, ինչպէս այդ ինքը կոչում էր, նա գը-
նում էր գլուխը վերև բարձրացրած և պահում
էր հաստատաբնութիւնը մինչև վերջ, ինչ իի-
մար գործի էլ տուած լինէր իւր կամքի ոյժը:
Անմիտ յամառութիւնը—այդ միւսոյնն է, ինչ որ
լիմարութիւնը դատարկութեան ծալին մացու-
ցուած, որ և ծառայում է ինչպէս նրա շարունա-
կութիւն: Կա անցնում է հեռուն: Առ հասա-
րակ, երբ մի որ և է, մասնաւոր կամ հասա-
րակական, թշուառութիւն փլփում է մեր վե-
րայ, եթէ մենք քննենք նրան ամեն կողմից,
այն հիման վերայ թէ ինչպէս են փլուած բե-
կորները տեղաւորուել՝ այն ժամանակ համա-
րեա մենք կը գտնենք, որ բոլորը շինուած է
եղել սահմանափակ, յամառ և կոր մարդուց,
մարդուց՝ որ հաւատացած է իրան և հրճուում
է իրանով:

Աշխարհիս վերայ շատ են յամառ ճակատա-
պիրները. նրանք երևակայում են, թէ իրանք
են իսկական տեսչութիւնները:

Եւ այսպէս, ահա թէ ինչպիսի մարդ էր

Կլերվօ բանտի արկեստանոցի տեսուչը. ահա ին-
չից էր շինած այն կրակահանը, որով հասա-
րակութիւնը ամեն օր զարկում էր բանտարկեալ-
ներին, որպէս զի նոցանից գուրս վիժէ կայծեր:
Այդպիսի կրակահաններով այդպիսի կայծա-
քարերից գուրս բերուած կայծերը շատ անգամ
առաջացնում են հրդէհներ:

Մենք ասացինք, որ Կլօդ Գեօն Կլերվօ հա-
սածին պէս, նրան №-ցին և դրին գործի: Տեսուչը
նրան գտնելով լաւ վարպետ, նրա հետ լաւ
էր վարվում: Մի անգամ, մինչև անգամ, լինե-
լով հոգեկան լաւ տրամադրութեան մէջ և
տեսնելով, որ Կլօդ Գեօն շատ տխուր է,—իսկ
Կլօդը սիրած կնոջ վերայ մտածելուց չէր դա-
դարում,—պատմեց նրան ամենաուրախ ար-
տաքերութիւններով, ժամանակ անցկացնելու
և Կլօդին միսիթարելու համար, թէ Աշոտ-
առահետ արդէն իւր սանձը բաց է թռողել և մը-
տել... Կլօդը սառնութեամբ հարցրեց. «իսկ ե-
րեխան ի՞նչ եղաւ»:—Տեսուչը պատասխանեց, որ
երեխայի մասին ոչինչ յայտնի չէ:

Մի քանի ամսից լետոյ երեւում էր, որ Կլօ-
դը բանտային կեանքին կատարելապէս ընտե-
լացաւ, և այլ ևս ոչինչ բանի վերայ չէր մը-
տածում: Լուրջ խաղաղութիւնը, որ այնքան յա-
տուկ էր Կլօդի բնութեան, նորից տիրապետեց

Նրան։ Համարեա միւնոյն ժամանակամիջոցում
Կլօդը ունեցաւ մի տեսակ ազգեցութիւն իւր
ընկերների վերայ։ Եւ ինքն էլ չէր հասկանում
ինչու, բայց բոլորը կարծես խօսք էին կապել ա-
մեն բանում նրա խորհրդին դիմել, լսել, յափրշ-
տակվել նրանով, վերջապէս նմանվել նրան.
իսկ այդ բոլորը մարդու ազգեցութեան վերին
աստիճանն է... Այն, մեծ պատիւ է և փառք,
երբ քեզ խոնարհվում է այդպիսի անհնաղանդ
արարածների մի բազմութիւն։ Այդ իրաւունքը
նա ձեռք բերաւ իւր կամքեց դուրս։ Այդ ա-
ռաջացել էր նրա անընդդիմագրելի շրջահայե-
ցողութեան ազգեցութեամբ։ Մարդու աչքերի
մէջ կարդում ես նրա հոգին, ծանօթանում ես
նրա մտքերի հետ։ Դրէք մտածել կարողացող
մարդուն չ'մտածող մարդկանց մէջ, և դուք կը
համոգիք, որ մի քանի ժամանակից յետոյ,
մարմինների ձգտողական անընկճելի օրէնքի հա-
մենատ, բոլոր մութ՝ գյուխները յարդանքով և
խոնարհութեամբ կ'ձգտեն դէպի մտածող մար-
դու լուսաւոր գլուխը։ Կան մարդիկ երկաթից
ստեղծուած, կան մարդիկ մագնիսից։ Կլօդը մադ-
նիս էր։

Դեռ երեք ամիսը չ'լրացած, Կլօդը դարձաւ
հոգի, օրէնք, արհետանոցի կարդը։ Բոլոր այդ
սլաքները շարժվում էին թւաթերթի շուրջը,

որ Կլօդն էր ներկայացնում իրանից։ Հաւանա-
կան է, որ նա երբեմն տարակուսանքով հար-
ցնէր իրան, «Հրամայիղ եմ ես, թէ կալանաւոր»։
Կլօդը, այսպէս ասած, գերի ընկած պապ էր
իւր կարգինալներով։

Եւ ամեն ժամանակ և ամեն տեղ յայտնուող
յետադիմութեան օրէնքի համեմատ, բանտար-
կեալներից սիրված Կլօդ՝ ատելի էր բանտա-
պետներին։

Կլօդ Գեօն ունէր զայլի շատակերութիւն։
Այս նրա մարմնակազմութեան առանձնայատ-
կութիւնն էր։ Երկու բանտարկեալներին նշա-
նակած բաժինը հազիւ մէնակ նրան բաւակա-
նութիւն էր տալիս։ Կատագելլան, Սպանիայի
դուքսը և մեծը, ունէր սոյնանման ախորժակ,
և այդ նրան ծիծաղ էր պատճառում. բայց այն,
ինչ որ Սպանիայի մեծին ծիծաղ էր պատճա-
ռում, մեր կալանաւորի համար կազմում էր
ամենամեծ անբազութիւն։ Կլօդ Գեօն ազա-
տութեան մէջ, իւր խճիթում, գործում էր ամ-
բողջ օր, գնում էր 4 ֆունտ հաց և ուտում
էր։ Կլօդ-Գեօն բանտումը նոյնպէս գործում էր
ամբողջ օր և ստանում էր միայն մէկ ու կէս
ֆունտ հաց և քառորդ ֆունտ միս։ Կլօդի հա-
մար բաժինը աւելացնելը անկարելի էր. և բան-
տումը թշուառը միշտ քաղցած էր։

Նա միայն քաղցած էր: Նա այդ մասին չէր գանգատվում, այդ նրա բնութեան մէջ չ'կար:

Մի անգամ Կլօդը, իւր բաժին հացը կլանելով, նորից սկսեց իւր պարապմունքը, լուսալով որ գործելով քաղցը կ'յազեցնէ: Միւս կալանաւորները ուրախ-ուրախ վերջացնում էին իրանց խղճալի ճաշը: Մի երիտասարդ կալանաւոր, գեղ-նած, մաշուած, մօտեցաւ Կլօդին. նա իւր ձեռքում պահած ունէր դանակ և իւր ճաշի բաժինը, որին դեռ ձեռք էլ չէր տուել: Նա կանգնած էր Կլօդի առաջ, առանց վստահանալու, ցանկանալով մի բան ասել: Այդ տղան իւր հացով, մսով և դանակով Կլօդին միանգամայն հաբերութիւնից հանում էր:

— Ի՞նչ ես ուզում, — կծու կերպով հարցըց նա վերջապէս: — Ինձ մի շնորհարք, — անհամարձակ պատասխանեց երիտասարդը:

— Ի՞նչ շնորհ:

— Օգնիր ինձ, իմ բաժինս վերջացնելու, դա արդէն ինձ համար շատ շատ է: Կլօդի աչքերում երևացին արտասուքի կաթիլներ. նա առաւ դանակը, բաժանեց ճաշը երկու հաւասար մասերի, մէկն առաւ իրան համար և սկսեց ուտել:

— Ճնորհակալ եմ, — ասաց երիտասարդ կալա-

նաւորը. — Եթէ կամենում ես, ամեն օր կ'բաժանենք բաժինս, աւելացըց նա: Հետո մասնաւոր մնունդ բնունդ է: Անունդ բնունդ է: Ալբէն:

— Քեզ ինչու են նստացըել: Ի՞նչ պատասխան կամար: Ալբէնը ճապարհում է: Ինձ էլ, — ասաց Կլօդը: Ար վանաձ պատասխան Ալբէնը ճշմարիտ որ ամեն օր իւր ճաշը բաժանում էր Կլօդ-Գեօփ հետ:

Կլօդը ՅՅ տարեկան էր, բայց թւում էր, թէ նա 50 տարեկան է: Ալբէնը 20 տարեկան էր, բայց նա նմանում էր 17 տարեկան պատասխու, այնքան անմեղութիւն կար այդ գողի կերպարանքի մէջ: Երկու կալանաւորների մէջ կապուեց բարեկամութիւն — առաւել — որդիական սէր: Ալբէնը, Կլօդի հետ համեմատելով, մի երեխայ էր: Նրանք գործում էին միւնոյն արհեստանոցում, քնում. էին միւնոյն յարկի տակ, ճեմում էին մի բազում, ուտում էին մի հաց. մէկը միսի համար էր՝ ամբողջ աշխարհ: Նրանք բաղդաւոր էին երկում:

Մենք արդէն ծանօթացել ենք բանտի տեսչի հետ: Այդ կալանաւորներից ատուած մարդը պարտաւոր էր շատ անգամ. նրանց խաղաղացնելու համար դիմելու Կլօդին: Քանի անգամ հասարակ բանտարկեալը, Կլօդը, օդնութեան ձեռք-

էր տուել իրաւունք ունեցող տեսչին ապստամբութեան ժամանակ: Եւ ճշմարիտ, բանտարկեալներին խաղաղացնելու համար, Կլօդի տասը խօսքը իրանց զօրութեամբ հաւասարվում էին տասը ժանդարմների, այնքան նաև սիրելի էր բանտարկուածների համար: Ինչքան Կլօդը տեսչի համար օգտակար էր, այնքան էլ այդ վերջինը ատում էր նրան: Նա զողին նախանձում էր: Նա իւր հոգւոյ խորքում զգում էր դաշտնի ատելութիւն, նախանձելի, անողոքելի ատելութիւն. ոչնչութեան ատելութիւնը դէպի խելքը: Այդ նմանօրինակ զգացմունքների ամենաղղուելին է: Բայց Կլօդը սիրում էր Ալբէնին և նրա համար միւնքնն էր տեսչի վերաբերութեամբ:

Մի անգամ, երբ կալանաւորներին զոյգ-զոյգ արձակում էին արհեստանոց այն սենեակից դուրս, որտեղ քննել էին, բանտապետը Կլօդի մօտ կանդնած, Ալբէնին կանչեց և առաց.

— Տեսուչը քեզ կանչում է: — Ի՞նչ է ուզում նա քեզանից, — Հարցրեց Կլօդը:
— Չ' գիտեմ, — պատասխանեց Ալբէնը:

Նրան տարին:
— Անցաւ առաւոտը, Ալբէնը չ' վերադարձաւ:
— «Ճաշի ժամանակ երեխ անպատճառ կ' դայ»,
— մտածեց Կլօդը:

Բայց Ալբէնը չ' կաւ: Վերադարձան արհեստանոց, Ալբէնը այնտեղ չ' կար: Այդպէս անցաւ մի օր, Երեկոյեան, երբ կալանաւորներին բերին քննելու, Կլօդը սկսեց աչքերով վիճութեամբ Ալբէնին, բայց չ' դառնաւ: Երեխ նա շատ էր տանջվում, որովհետեւ նա դիմեց բանտապետին, որ երբէք նա չէր արել:

— Միթէ Ալբէնը հիւանդէ, — Հարցրեց նա:

— Ոչ, — պատասխանեց նա: այս մարմար

— Ապա ինչո՞ւ այսօր նա չէ երանում, — կրկնա հարցրեց Կլօդը: զօր քայլ զ այս ք այս ամ ա Փոխադրեցին ուրիշ բաժանմունք, — սառնութեամբ պատասխանեց բանտապետը:

Այդ խօսակցութեան վկայ լինողները վերջերումը ցոյց տուին, թէ բանտապետի պատասխանի ժամանակ Կլօդի ձեռքը, որ այդ բոպէին պահած է եղել վառած մոմ, զողացել է: Բայց նա հանգիստ կերպով շարունակել է: — «Այդ ով է հրամայել»:

— Ով, յաւտնի բան է տեսուչը, — պատասխանել է բանտապետը:

Հետեւալ օրը անցաւ, ինչպէս նախընթացը, այսինքն առանց Ալբէնի: Երեկոյեան, ինչպէս առ հասարակ լինում էր, տեսուչը, արհեստանոցների փակելուց քիչ առաջ, նայեց գործերին: Կլօդը հեռուից նրան տեսնելով, վերցրեց

իւր գդակը, կոճկուեց և վերկացաւ կանդնեց պատուաւոր գիրքով իւր նստարանի առաջ, գըդակը ձեռքին, սպասելով նրա մօտենալուն: Տեսուչը անցաւ: «Պարոն», արտասանեց նա: Տեսուչը կանգ առաւ, թեքվելով հանդարտորէն դէպի նրա կողմբ: «Այդ գուք էք հրամակել Ալբէնին փոխադրել միւս բաժանմունք:

— Ես,—պատասխանեց տեսուչը:

— Պարոն, որպէս զի ես կարողանամ ապրել, ինձ համար անհրաժեշտ է Ալբէնը.— և նա աւելացրեց.— զիտէք արդեօք, որ իմ բաժին ճաշը ինձ հերիք չէ անում. Ալբէնը իւր հացի և մսի կէսը ինձ էր տալիս:

— Այդ նրա գործն է և ոչ թէ իմը,—ասաց տեսուչը:

— Զէ կարելի արդեօք Ալբէնին ինձ հետ մի բաժանմունքում տեղաւորել:

— Զէ կարելի. արդէն այդ վճռուած է:

— Ո՞վ է վճռել:

— Ես:

— Պարոն,—առարկեց Կլօդը,—այդ ինձ համար մահու և կենաց խնդիր է. այդ կախուած է ձեզանից:

— Ես չեմ փոխում իմ վճիռները:

— Պարոն, միթէ ես երբեկցէ մեղապարտ եմ գտնուել ձեր առաջ:

— Երբէք:

— Ուրեմն, ինչու համար ինձ Ալբէնից բաժանում էք:

— Որովհետեւ... պատասխանեց տեսուչը և շարժուեց առաջ:

Կլօդը, զլուխը զցեց քարշ և ոչ մի խօսք չ'ասաց: Խեղճ առխւծը վանդակի մէջ է. նրանից խլել են նրա սլրելի շնիկը:

Մենք պարտաւոր ենք ասել, որ անջատումի տանջանքը չ'պակասացրեց Կլօդի հիւանդու շատակերութիւնը: Սակայն, երեսում էր, որ բանտարկեալի մէջ ոչ մի փոփոխութիւն չէր եղել: Նա Ալբէնի վերաբերմածք ոչ ոքի հետ չէր խօսում: Նա միայն ման էր գալիս մէնակ բազում և քաղցած էր: Ահա բոլորը:

Միւնոյն ժամանակ նրան լաւ ճանաչողները նրա երեսում նկատում էին ինչոք մռայլ և սալրափելի բան, և այդ, կարծես, օր աւուր փոխվում էր գէպի աւելի չարագուշակ, աւելի անհամականալին: Այնուամենայնիւ նա սովորականից աւելի հեղ էր:

Կալանաւորներից շատերը առաջարկում էին նրան՝ բաժանել իրանց բաժինը միասին, բայց նա, ժպիտը երեսին, հրաժարվում էր:

Տեսչի հետ բացատրուած օրից յետոյ, Կլօդը ամեն երեկոյ մի որ և է ծիծաղալի բան էր ա-

նում, որը շատ զարմացնում էր նրան իբրև լրր-
ջամիտ մարդ ճանաչող բանտարկեալներին: Եթե
նշանակված ժամին տեսուչը շըջում էր արհես-
տանոցները, Կլօդը բարձրացնում էր աչքերը,
թափանցում էր հայեացքով տեսչին, անձկու-
թեամբ և բարկութեամբ լի, աղաչանքով և
սպառնալիքով արտասանում էր միմիայն երկու
խօսք: «Ապա Ալբէնը»:

Տեսուչը կամ շարժմունք էր անում, թէ ո-
չինչ չէ լսում, կամ ուսերն էր վեր քաշում:

Դիզուր էր տեսուչը ուսերը վեր քաշում, —
բոլոր ներկայ գտնուողների համար պարզ էր, որ
Կլօդ Գեօն մի ինչոր ներքին չար վճիռ էր
կայացրել: Ամբողջ բանտը անհամբերութեամբ
սպասում էր վճռականութեան և յամառու-
թեան կուի վերջին:

Վկաների ապացուցածներից յախնի է, որ
մի անգամ, ՚ի միջի ալլոց, Կլօդը ասաց տեսչին.
«Յարդելի պարոն, խնդրեմ տուէք ինձ իմ ըն-
կերա: Հաւատացնում եմ ձեզ, որ այդպէս ամե-
լի լաւ կ'լինի: Զ'մոռանաք, ես ձեզ նախազգու-
շացնում եմ»:

Միւս անգամ, կիւրակի օր էր, Կլօդը բագում
նստած էր քարի վերայ, գլուխը դէպի կուրծ-
քը քարշ արած, առանց մի քանի ժամ շարժ-
վելու: Կալանաւոր Փայէտը մօտեցաւ նրան և

հարցրեց. «Ի՞նչ ես քաշ գալիս այստեղ, Կլօդ»:
Նա ծանրութեամբ բարձրացրեց իւր խիստ գը-
լուխը և արտաբերեց. «Ես մէկին դատում եմ»:
Վերջապէս մի անգամ 1831 թիւ Հոկտեմբերի
25-ի երեկոյեան, ինչպէս որ տեսուչը բանտար-
կեալներին աչքից անցրեց, Կլօդը ոտով ջար-
դեց ապակին, որը ինքը գտել էր նախասենեա-
կում. ապակին ըրբխկ-չըրբխկաց և տեսուչը հար-
ցրեց. «այդ ինչ աղմուկ է»:

— Ոչինչ, հէնց այնպէս, — պատասխանեց Կլօ-
դը. — այդ ես եմ, պարոն տեսուչ, վերադրէք
ինձ իմ ընկերին:

— Անկարելի է, — արտաբերեց տեսուչը:
— Բայց այդ պէտք է, — արտասանեց Կլօդը
հանդարտօրէն, բայց հաստատ նայելով ուղղակի
տեսչի երեսին: «Լաւ մտածեցէք, այսօր չոկ-
տեմբերի 25-ն է, կ'սպասեմ մինչ նոյնմբերի չոր-
սը», աւելացրեց նա: Այդ բանի վերայ բան-
տապետներից մէկը դարձրեց տեսչի ուշագրու-
թիւնը, ասելով, որ Կլօդը նրան սպառնալիք է
տալիս, և որ դրա համար նա պիտի ենթար-
կուի միայնակ բանտարկութեան:

— Ի՞նչ բան է միայնակ բանտարկութիւնը, —
արտաբերեց տեսուչը, արհամարհանօք ժպտելով.
— պէտք է այդ մարդկանց հետ բարի լինել:
Միւս օրը, երբ կալանաւորները արեի տակ,

տաքսնում էին, Կլօդը տխուր և մտախոհ ման
էր զալիս զաւթում, նրան մօտեցաւ կալանաւոր
Պերնօն և ասաց. — Դու տխուր ես, ինչի՞ վերայ
ես մտածում:

— Վախենում եմ, չլինի թէ մի դժբաղդու-
թիւն պատահի մեր սիրելի տեսչին, — պատաս-
խանեց Կլօդը:

Նոյեմբերի 4-ին ինն օր էր մնում, և Կլօդը
ամեն յարմար առիթ ձեռքից չէր թողնում,
որ չլայտնէր տեսչին իւր հոգւոյ թշուառ դը-
րութեան մասին, Ալբէնից ջոկվելու պատճառով:
Տեսուը նրա խնդրքից նեղացած և գտնելով
նրան ոչ թէ հասարակ խնդիր, այլ պահանջ,
հրամաքեց Կլօդին նստացնել 24 ժամով առան-
ձին պատժարան: Ահա բոլորը ինչ որ աշխա-
տեց Կլօդը:

Հասաւ Նոյեմբերի չորսը: Կլօդի երեսը այն-
պէս պարզ էր, ինչպէս Ալբէնից անջատուելուց
յետոյ երբէք չէր եղել: Զարթնելով առաւօտ,
նա սկսեց քրքրել իւր սպիտակ արկղը, որի մէջ
թափուած էին չնչին ցնցոտիներ: Հանեց միջից
իւր սիրական կնամարդի, իւր փոքրիկի մօր
մկրատը: Մկրատը և քրքրուած գիրքը լ'Emile,
ահա բոլորը, ինչ որ մնացել էր նրա մօտ ան-
ցեալ բաղդատութիւնից, բայց իսկապէս սրանք
նրա համար աւելորդ էին: Մկրատը հարկաւոր-

վում է կանանց, զիրքը՝ զրադէտին, իսկ Կլօդը
ոչ կարել զիտէր, ոչ կարդալ:

Երբ նա անցնում էր, անարդված, ապակա-
նացրած և այժմ կաւով սպիտակացրած վան-
քի միջով, մօտեցաւ կալանաւոր Փէրարիին,
որը զարմացած նայում էր պատուհանի հաստ
երկաթեալ վանտակապատին: Կլօդը իւր ձեռքում
ունեցած փոքրիկ մկրատը ցոյց տալով ֆերա-
րիին, ասաց. «այսօր երեկոյեան այ այս մկրա-
տով ես կ'խարտոցեմ այդ երկաթի ցանցերը:»

Ֆերարին տարակուսանքով ծիծաղեց, Կլօդը
նոյնպէս: Այդ օրը Կլօդը սովորականից աւելի
եռանդով գործեց: Երբէք նա այդպէս լսու չէր
պարապուել. կարծես նա անպատճառ ախօր ու-
զում էր յարդեալ զլիարկը վերջացնել, որ պա-
տուիրել էր Տրուալից մի ինչ որ բրաստի ա-
նունով մարդ:

Կէս օրից մի քանի բողէ առաջ Կլօդը, մի
ինչ որ առիթով, անցաւ հիւսների բաժանմուն-
քը: Այն տեղ էլ նրան նոյնպէս շատ էին սի-
րում, չ'նայելով, որ նա նրանց մօտ քիչ էր լի-
նում: «Բա՛, Կլօդը եկաւ», և նրան շըջապատե-
ցին իսկոյն և եթ կալանաւորները ամեն կող-
մից, ուրախ-ուրախ ժամունով նրա երեսին:

Կլօդը սուր հայեացքով չափեց արհեստա-
նոցը և, տեսնելով, որ վերակացուներ չ'կան

այնտեղ, ասաց. «Ո՞վ ինձ մի կացին կ'տալ»:
— Ինչիդ է հարկաւոր, — հարցրին նրան:
— Տեսչին սպանելու համար, — պատասխանեց
նա:

Նրան առաջարկեցին մի քանի կացիներ
ջոկելու համար. նա վերառաւ ամենափոքրիկը,
թագրեց վարդիկումը և դուրս թռաւ:

Արհեստանոցում գտնուում էին 27 կալանա-
ւորներ: Կլօդը նրանց չ'խնդրեց, որ ոչ ոքի չ'ա-
սեն իւր գաղտնի ասածը. բայց նրանք լռում
էին: Մինչև անգամ իրանց մէջ սրա վերաբեր-
մամբ ոչինչ չէին խօսում:

Ամեն մէկը սպասում էր, թէ ինչ պիտի լի-
նի: Այդ բանը սարսափելի էր, տեսանելի և
պարզ: Բարդացնել նրան անկարելի էր: Կլօդին
չէր կարելի ոչ գործիք շինել, ոչ մատնել նրան:

Մի ժամից յետու, ճեմելու ժամանակ, Կլօդը
մօտեցաւ 16 տարեկան մի կալանաւորի և նը-
րան խորհուրդ տուաւ կարդալ սովորել: Այդ
ըստէին նրանց մօտեցաւ Փալէտը և հար-
ցրեց.

— Այդ ինչ սատանալ ես վարդիկումդ թագ-
ցրել:

— Այդ կացին է, երեկոյեան տեսչին սպանե-
լու համար. չ'ինի երեւում է, — աւելացրեց նա:
— Մի փոքր, — պատասխանեց Փալէտը:

Օրվայ մնացած մտոր անցաւ սովորականի պէս:
Ժամը 7-ին վերակացուները վակեցին կալանա-
ւորներին արհեստանոցներում, իսկ իրանք գը-
նացին: Գնացին նրա համար, որ միայն վերա-
դառնան այն ժամանակ, երբ տեսուչը, բան-
տարկեալների գործելը երեկոյեան նայելուց յե-
տույ, գուրս է դնում:

Կլօդ Գեօին վակեցին լուր բոլոր բնկերների
հետ, ինչպէս ուրիշներին, այն արհեստանոցում,
որտեղ նրանք բոլորը գործում էին: Այդ ժամա-
նակ շինութեան մէջ անցնում էր մի տեսա-
րան, որ զուրկ չէր ոչ մեծութիւնից, ոչ սար-
սափելութիւնից, մի տեսարան՝ իւր տեսակի
մէջ միմիայնը և որը չէ կարելի բառերով
յայտնել:

Դատարանով իմացուեց, որ այնտեղ գտնուում
էին 82 գողեր, միևնոցն թւում և կլօդը: Ինչ-
պէս որ վերակացուները գնացին, Կլօդը բարձ-
րացաւ նստարանի վերայ և յայտարարեց ներ-
կայ գտնուողներին, թէ նրան հարկաւոր է մի ինչ
որ բան յայտնել: Բոլորը լռեցին: Յետոյ Կլօ-
դը բարձրացրեց ձախը և ասաց. — «Զեզ բոլո-
րիդ յայտնի է, որ Ալբէնը ինձ համար ինչպէս
հարազատ եղբայր էր: Ինձ բաւական չէ այն
հացի և մտի բաժինը, որ ինձ համար բաց են
թողնում: Մինչև անգամ եթէ ես աշխատա-

ծիս արգիւնքով միմիայն հաց դնեմ, Էլի այն
ժամանակ ես քաղցած կ'մնամ: Ալբէնը ինձ
հետ իւր բաժինը բաժանում էր: Առաջ ես սի-
րեցի նրան, որովհետեւ նա ինձ կերպում էր,
իսկ յետոյ որովհետեւ նա ինձ սիրում էր: Տե-
սուչ պարան դրան մեզ միմեանցից բաժանեց:
Ենչ մեծ բան արժէր նրա համար չ'բաժանել
մեղաքայց նա չար մարդ է, մեր չարչարանքը
նրան բաւականութիւն է պատճառում: Ես նր-
ան ինդրեցի վերադարձնել ինձ լիմ Ալբէնին:
Գուգ տեսաք նա չուզեց այդ անել: Ես նրան
նշանակեցի ժամանակ մինչեւ Նոյեմբերի 4-ը, սրա
համար նա ինձ առանձին բանու նստեցրեց:
Այդ բոլոր ժամանակ ես նրան դատեցի և, վեր-
ջապէս, դատապարտեցի նրան մահուան պատ-
ժի (*): Այսօր Նոյեմբերի չորսն է, երկու ժամից
յետոյ նա կ'գայ: Նախազգուշացնում եմ, որ ես
նրան պիտի սպանեմ: Մրա դէմ ունէք մի բան
ասելու: Բայօթ լուռ էին: Կրօգը նորից սկսեց:
Նա տարօինակ քաղցրախօս էր, որ ի միջի այ-
լոց յատուկ էր նրան: Կրօգը ասում էր, թէ նա
շատ լաւ գիտէ, որ այդ իւր կազմից բռնու-
թիւն է, բայց և գիտէ, որ ինքը արդար է,
այդպէս վարվելով: Նա թողնում էր իրան ան-

* այս պատճենը չկազմական է պատճենի
* Կական նրա խօսքը:

կընդիր ուժսուն և երկու գողերից խղճին. նա
ասաց, թէ ծալրահեղութիւնից է դրգուած,
թէ հասկանում է, որ մարդ երբեմն բռնու-
թիւնը արդարացնում է անհրաժեշտեամբ,
բայց ընդունում է, որ իսկապէս խել մէկվ
կեանքը՝ փախարէնը չհատացանելով անկա-
րելի է; Նա աւելացրեց, թէ պատրաստ է իւր
կեանքը ճշմարիտ գործի համար տալու, թէ
ինքը վճռել է այդ գործը խելամտութեամբ, սա-
կայն խորհել է նրան միայն երկու ամիս, թէ
զգում է կանխակալ կարծիքից առաջացած գոր-
ծողութեան բոլոր անարդարութիւնը, և որ այդ
պատճառով ինսդրում է բացարձակ ասել. ար-
դեօք նա գործում է կանխակալ կարծիքի ազ-
դեցութեամբ: Եթէ այն, այն ժամանակ նու պա-
տօւաւոր կերպով պատրաստ է բացատրել իւր ա-
պացուցները այստեղ գտնուող ճշմարտասէր մարդ-
կանց առաջ: Նա յարեց որ թէ և պատրաստուել
է սպանել տեսուչ դին, բայց թէ ով որ էլ իցէ
ունկնդիրներից եթէ այդ մտադրութեան դէմ մի
բան ունի ասելու, այն ժամանակ նա պատ-
րաստ է լսել ամենայն առարկութիւն:
Միմիայն մի ձայն լսվեց ասքոխի միջից. «Ա-
ռաջ քան տեսչին սպանելը, Կրօգը պարտաւոր
է վերջին անգամ աշխատել համոզելու նրան,
որ համաձայնուի կատարել իւր ինսդիրքը»:

ամ գումարիտ ես ասում, իսօսեց կլօդը, և
այդ կանեմ: Մայն մարդարարութիւնը ուժը առաջ է կազմութիւնը:
Միքած ժամանակը անթը զարկեց: Ինչին տես-
տուչը պիտի դար: Առաջ մասնաւութիւնը բարձր է առաջ մասնաւութիւնը:
Ինչպէս որ արդ տարօրինակ ողատառանա-
կան ատեանը հաստատեց մասամբ արտայալ-
տուած վճռուը, կլօդը նորից հանդստացաւ: Նա
դրեց սեղանի վիրայ ամենը, ինչ որ ունէր շօ-
րեղէնի և սպիտակեղէնի վերաբերմամբ, և կալա-
նաւորների ողորմելի ժառանգութիւնը, և կան-
չելով մէկը միւսի ետևից այն ընկերներին, ո-
րոնց Ալբէնից յետոյ ամենից առաւել ուրում էր,
նա այդ բաները բաժանեց նրանց մէջ: Իրան
համար պահեց միայն նուիրական մկրատը:
Յետոյ նա նրանց բոլորին համբուրեց: Մի
քանիսը լաց եղան. նա նրանց երեսին ժպտաց:
Այդ վերջին ժամում կլօդը ըսպէ առ ըսպէ
դառնում էր մինչ այն աստիճան ուրախ և հան-
գիստ, որ ընկերներից մի քանիսը, ինչպէս լե-
տոյ նրանք յայտնեցին դատարանում, յոյ ու-
նէին, որ նա իւր դիտաւորութիւնը կը թողնէ
և չի սպանիլ տեսչն: Կլօդը, մինչեւ անգամ,
մի հանաք արեց—քթածուկերով փշեց և հանգ-
ցրեց մոմբ: Նա դեռ ունէր մի քանի վատ վար-
մունքներ, որոնք նրա արժանարութիւնը նը-
սեմացնում էին աւելի արագ, քան հարկ էր:

Ալսպէս թէջայնպէս, երբեմն նրա մէջ զգաց-
վում էր նախկին փողոցալին ստամբակը: Կլօ-
դը նկատեց, որ մի երիտասարդ կալանաւոր,
բոլորովին գունայժամի, իւր աչքերը նրա վերալ-
ուզած, գողում էր, երեկ շաւտով կատարվե-
լիք անցքին սպասելուց: «Մի՛ վախիք երիտա-
սարդ տղալ», ասաց նրան կլօդը, «մի լուր-
պէում ամեն ինչ վերջանած կ'լինի»:
Երբ նա իւր բալոր ունեցածը բաժանեց, մնաս-
բարեաւ արեց ամենի հետ և նրանց ձեռքը
սեղմեց: Նա ինդրեց նրանց լուել և գործ քակ-
սել: Նրանք լուռթեամբ խոնարհուեցին:
Արհեստանոցը, ուր կատարվում էրայդ, տե-
սարանը, մի երկարածև գահիկն էր. մի երկար
զագահեռագիծ, երկու կողմերից պատուհաննե-
րով, իսկ ծալքերից երկու հակառակ կողմե-
րից գռներով: Երկու պատերի դէմ, պատու-
հանների մօտ, կանգնած էին զործելու սեղանը
ները. նստարանները կպած էին պատերին:
Դահմի ամբողջ երկարութեամբ մնում էր անց-
քը՝ մէկ ծայրի գռներից դէպի միւսինը: Այդ
անցքը շատ նեղ էր, և այդ տեղով պիտի անցներ
տեսուչը արհեստանոցը նայելու ժամանակի: Հարա-
ւային դռնավ մտնում էր, իսկ հիստայինով
դուրս գալիս: Սովորաբար այցելութիւնը լինում
էր շատ արագ և առանց յապաղման: Կլօդը

նստեցիւր տեղում և սկսեց իւր զործը այնպէս, ինչպէս ժակ Կլէմանը սկսում էր իւր աղօթքը:

Տողորդ սպասում էին: Թոպէն մօտենում էր: Յանկարծ ժամացոյցը զարկեց: Առանց մի քառ ոռոգի էր: Այն ժամանակ Կլօդը ոտի կանգնեց, ամբողջ գահինով անցաւ, մօտեցաւ մտնելով դռնին և յենուեց գործելու սեղանին: Նրա երեսը կատարեալ խաղաղ էր և դուրեկան: Զարկեց ինը ժամը: Գուռը բացուեց, տեսուչը ներս մտալ:

Այդ րոպէին արհեստանիցում թագաւորեց գերեզմանական լուսթիւն:

Տեսուչը, սովորականի պէս, միայնակ էր: Նա մտաւ. նրա դէմքի արտայատութիւնը ուրախ էր, ինքնարաւական, անողոքելի: Նա չ'նկատեց Կլօդին, որ կանգնած էր գոնի ձախ կողմում, աջ ձեռքը փարզկի մէջ թագցրած:

Տեսուչը անցնում էր արագ, գլուխը շարժելով, խօսքերը ծամծամելով, ձգելով լոտի հայեացքներ և չ'նկատելով այն, որ բոլորի մը տածութիւնը կենտրոնացած էր մի և նոյն սարսափելի մտքի վերայ:

Յանկարծ նա միանգամից կանգ առաւ, զգալով իւր ետեսում մէկի քալերը: Այդ Կլօդն էր, որ նրան հետեւում էր քայլ առ քայլ:

— Ի՞նչ ես անում դու այստեղ, ինչու քո տեղումը չես, — հարցըց տեսուչը:

Բանտում մարդը՝ մարդ չէ, այլ շուն. նրան ասում են «դու»:

Կլօդ Ինը քաղաքավարի կերպով պատասխանեց. «Գիտէք ինչ կայ, ինձ հարկաւոր է ձեզ հետ խօսել, պարոն տեսուչ»:

— Ի՞նչի վերաբերմքը: Այսինչ է այսպիսի:

— Ալքնի: Այսինչ է այսպիսի:

— Դարձեալ:

— Միշտ:

— Ե՛ւ, տեսնում եմ, որ քեզ համար քիչ է եղել քսան ու չորս ժամուար միայնակ բատարկութիւնը:

Կլօդը շարունակեց, հետևելով նրան. «Պարն տեսուչ, վերադարձէք ինձ իմ ընկերին»:

— Անկարելի է: Այսու այսու մասնան չ'պար:

— Պարն տեսուչ, — ասաց Կլօդը այնպիսի ձայնով, որ սատանալին իրան կ'շարժէր, աղացում եմ ձեզ, Ալքնին ինձ մօտ տեղափոխեցք: Գուք կ'տեսնէք, թէ ես ինչպէս կ'աշխատեմ: Գուք աղատ էք, այդ ձեզ համար մի և նոյն է, դուք չ'զիտէք բարեկամը ինչ է, իսկ ես չորս պատերի մէջ եմ, ես բանտումն եմ:

Գուք ամեն տեղ կարող էք ման գալ, բայց ինձ միայն մի Ալքն ունեմ: Տուէք նրան ինձ: Ալքնը ինձ կերակրում էր, դուք այդ գիտէք:

Բաւական է, որ դուք մի «այտ» ասէք: Զեզ

Համարի ինչ կարժէնալ, եթէ Կլօդը և Ալբէնը
մի սենեակում լինեն: Այդ շատ հասարակ բան
է: Պարզն տեսուչ մեր ամենաբարի պարոն տե-
սուչ աղաջնում եմ ձեզ Տէր Աստուծոյ անու-
նով. . .

Կարելի է իւր ամբողջ կեանքում Կլօդը այս-
քան բան չէր ասել բանտապետին: Այդ բոլոր
ինքնազպումից յետոյ, նա, լոգնած, քիչ սպա-
սեց: Տեսուչը, անհամբերութեան նշան անելով,
արտասահնեց: «Անկարելի է, ասուած է. քիչ գը-
լուխ ցաւացրու: Այսուհետեւ սրա վերաբերմամբ
չհամարձակուես մի ծպտուն հանել»: Եւ որով-
հետեւ տեսչին ժամանակ չունէր, քայլերը ա-
րագացրեց: Կլօդը նոյնպէս: Խօսելով այդպէս,
նրանք մօտեցան դուրս գալու դռնին. ուժուն
և սերկու գողեր: Նայում էին և լուսում, առանց
բարձր շաւնչ առնելու: Կլօդը հանդարտ շար-
ժեց տեսչի ձեռք: Դեռ գիշեց ինձ ասացէք, ինչո՞ւ եմ ես մա-
հուանդատապարտուած, ասացէք, ինչո՞ւ էք
դուք նրան ինձանից լիլ: Ասած էք գողեր: Ասացէք գողեր: Մոտվիշուա-
նեց տեսուչը և ձեռը մեկնեց դէպի դուռը, որ
դուք նրան գիշեց: Տեսչի պատասխանից յետոյ Կլօդը մի քայլ
արեց յետ: Ուժուն և երկու գողերը տեսան,

թէ ինչպէս նա կացինը հանեց, ինչպէս նրա ձեռ-
քերը բարձրացան վերև և, մինչև որ տեսուչը
կարող էր աղաղակ բարձրացնել, կացնի երեք
հարուած — սարսափելի է ասել — երեք հա-
րուած, միւնուն տեղին ուղղուած, նրա գանգը
ճեղքեցին: Նայն բոպէին, երբ նա երեսը վերև
ընկնում էր, չորբորդ հարուածը ճեղքեց նրա
երեսը, յետոյ: որովհետեւ կատաղութիւնը միան-
գամից հանգստացնելը գիտար է, Կլօդ Գեօն
հինգերորդ անօգուտ հարուածով ճեղքեց նրա
ազգը: Տեսուչը արդէն մեռած էր: Յետոյ Կլօ-
դը ձեռքից ձգեց կացինը և բղաւեց. «Աժմ՝
միւսին»: — Այդ միւսը ինքն էր: Կլօդը հանեց
իւր կնոջ մկրատը և, ոչ ոքից չիսանդարուելով,
խրեց իւր կրծքի խորքը: Նա երկար քրքրում
էր մկրատով իւր կրծքում, բղաւելով. «Անի-
ծեալ սիրտ, չե՞մ գտնելու քեզ, ինչ է», և, վեր-
ջապէս, արիւնաթաթախ ուշաթափուեց և ըն-
կաւ տեսչի դիակի վերայ:

Ինքներդ գատեցէք. նրանց երկուսից որն
էր միւսի գոհը:

Եթե Կլօդը սթափուեց, նա արդէն ընկած էր
անկողնում, մաքուր շորերում, վիրակապուած
և հոգատարութեամբ շրջապատուած: Նրա գըլ-
խի կողմում կանգնած էին երկու գթութեան
քոյլեր և նրա առողջութեան դըութեան

մասին տեղեկացող դատաստանական մի պաշտօնեայ: Կլօդը շատ արիւն էր կորցրել, բայց մկրատը, որով նա սրտաշարժ նախապաշարմունքով վիրաւորել էր իրան, վատ ծառայութիւն էր արել նրան. վէրքերից չ մէկը վտանգաւոր չ'յայտնուեց. ամենամահացու վէրքը նրա համար այն էր, որ նա տուել էր տեսչին:

Քննութիւնը սկսուեց: Նրան հարցրին, թէ ինքն է արդեօք սպանել տեսչին: Նա սպատասխանեց՝ «այո»: Նրան հարցրին: «Ինչո՞ւ:—Նա սպատախանեց. «Ո ռ ո վ հ ե տ և»...

Բայց նրա վէրքերի դրութիւնը վատացաւ. առաջացաւ տաքութիւն և քիչ էր մնում, որ նա մեռնի:

Նոյեմբերը, Դեկտեմբերը, Յունվարը և Փետրուարը անցան հոգացողութիւններով և պատրաստութիւններով: Բժիշկները և դատաւորները անդադար ջանքեր էին անում կլօդի շուրջը. առաջինները աշխատում էին նրան առողջացնել, մինչդեռ երկրորդները սարքում էին նրա համար կառափնարան: Մարտի 16-ին, 1832 թ. Կլօդը ցանկացեալ առողջութեամբ ներկայացաւ Տրուալի դատարանը: Ամբողջ քաղաքը այնտեղ էր:

Կլօդը, զգուշութեամբ սակրուած, բաց զըլխով և կալանաւորի գորշ զգեստով՝ նայում էր շատ գեղեցիկ:

Դատախազը ժողովել էր ամբողջ դաւառից զինուորներ դատարանի դահլձի մէջ, «որպէս զի, — յայտարարում էր նա, — պահպանեն բոլոր այն անապիտաններին, որոնք պէտք է լինէին դատարանում, իբրև այս գործի վկաներ»:

Գործի քննութեան ժամանակ յայտնուեց անսպասելի դժուարութիւն. Նոյն վկաներից ոչ մէկը չէր կամենում Կլօդի դէմ վկայութիւն տալ: Նախագահը իւր իշխանական իրաւունքով սպառնում էր: Բայց ի զուր:

Այն ժամանակ Կլօդը հրամակեց նրանց ասել բոլորը, ինչպէս եղել է: Այստեղ միայն լեզուները բացուեցին, և կալանաւորները պատմեցին այն, ինչոր գիտեին այս գործի վերաբերմամբ:

Կլօդը լսում էր նրանց ամենամեծ ուշագրութեամբ. երբ որը և իցէ նրանցից, մոռացկոտութեան պատճառով, կամ թէ դէպի նա ունեցած սիրուց, զանց էր առնում այն փաստերը, որոնք մեղքը մեծացնում էին, մարդասպանը ինքը պակասը լրացնում էր: Այդ կերպով դատաւորի առաջ պարզ յայտնվում էր այն, ինչ որ մենք այդ երեսներում պատմել ենք:

Եղաւ բոպէ, որ կանայք լաց եղան: Դուրս բերին կալանաւոր Ալբէնին: Այժմ նա պէտք է վկայութիւն տար: Ալբէնը մտաւ օքիուելով. նա հեծկլտում էր: Ժանդարմները չկարողացան

խանգարել նրան յարձակվելու Կլօդի գիրկը, ոռ
ըստ պահելով նրան, ասաց գատախաղին. «Ահա
այն չարագործը, որ բաժանում էր հացը սոված-
ների հետո»: Կլօդը այդ խօսքերը՝ արտասահե-
լով, առեց Ալբենի ձեռքը, կպցը իւր պոոշ-
ներին և քնքաբար համբուրեց:

Եթե բոլոր վիտաներին հարցուվորձեցին, դա-
տախազը տեղից վերկենալով, ասաց. «Պարո՞ն
դատաւորներ, հասարակական հիմունքները կը
գործանուեն, եթէ օրէնքը խստութեամբ չի
պատժի այդպիսի խոշոր ոճասպորձներին, որպի-
սին է այդ դատապահը բոտուսը; ողը»: և ալն
և ալն:

Այդ արժանալիշատակ ճառից իստոյ, սկսեց
խօսելու մեղադրեալի պաշտպանը: Մեղադրան-
քը և պաշտպանութիւնը այն ներդրծութիւնն
արին, ինչ որ առ հասարակ նրանք ներդրծում
են մրցարաններում, որոնք յայտնի են մեղա-
նում «քրէական դատ» անունով:

Կլօդը տեսնելով, որ գեռ բոլոր բաները չեն
բացուած, իւր հերթում վեր կացաւ տեղից: Ար-
հետապով խօսում էր այնպէս հիանալի, որ մի
լուսաւորած անձնաւորութիւն, որ ներկայ էր
դատարանում, զարմանքից ապշել էր: Բանից
դուրս եկաւ, որ նա աւելի ճառախօս էր, քան
մարդասպան:

Կլօդը խօսում էր կանգնած, թափանցող
ճարտարութեամբ ղեկավարուած ձայնով. նրա
աչքերի արտայատութիւնը պարզ, ազնիւ և
վճռական էր. նրա ձեռքերի շարժողութիւնը
միատեսակ էր, բայց վեհութեամբ լի: Կլօդը պատ-
մում էր բոլորը, ինչպէս որ եղել էր, հասա-
րակ, լրջօրէն, առանց ձանձրացնելու և առանց
իւր մեղքը մեղմացնելու: Խօստովանեց իւր յան-
ցանքը, նայեց ուղղակի 296 յօդուածին և իւր
գլուխը դրեց նրա վերայ:

Կլօդը երբեմն լինում էր բարձր պերճախօս.
այդ ժամանակ նրա պերճախօսութիւնը հասա-
րակութեան մէջ յարուցանում էր շարժումն և
ստիպում էր նրանց լոելեան, միմեանց տկան-
ջին կրկնել նրա արտաբերած բառերը: Երբ Կլօ-
դը շունչ առնելով հպարտ հայեացք էր ձգում
հանգիստականների վերայ, այդ բոպէներում դահ-
լիճում լսվում էր շշուկ: Երբեմն նա—այդ հա-
սարակ անդէտր—փոխվում էր դէպի քաղաքա-
վարին, քնքոյշը, ընտրում էր խօսակցութեան
ձեեր, ինչպէս լուսաւորուած մարդ. երբեմն լի-
նում էր համեստ, ուշաղիր, գգուշութեամբ էր
դիմչում: հակաճառութիւն պատճառող մանր
կէտերին և բարեհաճոյ էր դէպի դատաւորնե-
րը: Մի անգամ միայն բարկութեամբ զգացուեց,
դատախազը վերջնական ճառում ասաց, որ կը

Ըոդ Գեօն արհեստանոցների տեսչին սպանել է, առանց տեսչի կողմից մի առթի և բռնութեան, հետեապէս և ոչ գոգուած դրութեան մէջ: «Ի՞նչպէս, ես գոգուած չեմ», — ըղաւեց կլօդը: Այս, այդ ճիշտ է, ես ձեզ հասկանում եմ: Արբած մարդը ինձ խփում է, ես նրան սպանում եմ, — ես գոգուած էի, դուք ինձ խնայում էք, ուղարկում էք ինձ աքսոր: Բայց եթէ սթափ մարդը, իւր բոլոր մըտաւորական ընդունակութիւններին տիրապետելով, ճնշում է ինձ չորս տարուայ ընթացքում, ստորացնում է ինձ չորս տարուայ ընթացքում: Ես ունէի սիրեցեալ կին, որի համար ես գողացայ, — նա այդ կնոջով ինձ չարչարում է, ես ունէի երեխայ, նա այդ երեխայով ինձ չարչարում է. ինձ իմ հայս հերթիք չէ անում, բարեկամս ինձ իւր բաժնից մասն է տալիս, — նա խլում է ինձանից իմ բարեկամս, խլում է իմ հայս, ես խնդրում եմ դարձնել ինձ իմ բարեկամին — նա ինձ առանձին սենեակումն է նըստեցնում. ես նրան ասում եմ, այն անարդ արարածին՝ «դուք» — նա ինձ ասում է՝ «դու», ես ասում եմ՝ տանջվում եմ, — նա պատասխա-

նում է, որ ես նրա զլուխը ցաւեցնում եմ.... Կլ ինչ էր մնում ինձ անել: — Ի հարկէ, սպանել, և ես էլ նրան սպանեցի: Թող ես մարդասպան, թող ես հրէշ լինեմ, թող ձեր ասածը լինի — ես գոգուած չեմ. զլխատեցէք ինձ, այն, զլխատեցէք ինձ»:

Այստեղ մեր առաջին է ամբողջ մի յօդուած բարոյական գոգուութեան գրութեան վերաբերմամբ, որը թողուած է օրէնսդիրների կողմից համարեա անմշակ:

Երբ հականառութիւնը ընդհատուեց, նախագահը արեց կարճ, բայց փառաւոր եղբակացութիւն, որից երեսում էր, թէ կլօդ Գեօն վարում էր անվայել կեանք, թէ նա կատարեալ հրէշ էր, թէ նա այդ սկսել էր նրանից, որ ապրում էր հասարակական աղջկայ հետ և վերջացրեց նրանով, որ գողութիւն է արել և սպանել:

Այդ բոլորը կատարեալ ճմարտութիւն էր: Նախագահը հարցրեց դատապարտեալին, թէ արդեօք ոչինչ ասելու չունի նա իրան պաշտպանելու համար: «Ճատ քիչ», — պատասխանեց կլօդը, բայց ինչու ես գողացայ, ինչու ես սպանեցի: Կշռադատեցէք այդ երկու հարցերը, պարուն դատաւորներ»:

Քառորդ ժամից յետոյ տասներկու շամպենուաներ, որոնց մենք դատաւոր ենք կոչում,

գուրս բերին կլօդ Գեօի համար դատավճիռ։
Ամենից հաւանական է, որ գործի հէնց սկըզ-
բում դատաւորներից շատերը իրանց ուշադրու-
թիւնը դարձրած են այն հանգամանքի վերայ,
որ մեղադրուածին կոչում էին Գեօ (Ըստէ),
որ նշանակում է ան պիտան և որ այդ նը-
րանց վերայ խոր տպաւորութիւն է արել։

Կլօդ Գեօի համար կարդացին դատավճիռ.
Նա միայն ասաց. «Լաւ, բայց ինչու մարդը գո-
ղացաւ, ինչու մարդը սպանեց—ահա եր-
կու հարց, որոնց նրանք չեն պատաս-
խանում»։

Դառնալով բանտ, կլօդը ուրախ-ուրախ ընթ-
րեց և ասաց. «Երեսուն ու վեց տարի ապ-
րուած է»։

Նա չէր կամենում բողոքել դատավճարի դէմ,
բայց գթութեան քոյլերից մէկը, որ հիւանդու-
թեան ժամանակ նրան պաշտում էր, արտա-
սուքը աչքերին եկաւ նրա մօտ՝ այդ մասին ա-
ղաչելու։ Նա ներկայացրեց բողոքադիր, միմիայն
նրա խնդրանաց զիջանելով. բայց երևում էր, որ
կարելոյն չափ այդ բանին նա ընդդիմացել էր,
որովհետև այն երեք օրը, որ այդ մասին, իբ-
րև ժամանակ, տրվում է, մի քանի րոպէով ու-
շացած էր։

Խեղճ գթութեան քոյլը, ջերմ երախտագիտու-

թեամբ, նուիրեց նրան հինգ ֆրանկ։ Կլօդը վեր
առեց այդ փողը և շնորհակալութիւն յայտնեց։
Քանի որ բողոքի քննութեան ժամանակը
չէր անցել, կալանաւորները նրան փախչելու օգ-
նութիւն էին առաջարկում, բայց նա այդ մեր-
ժում էր։ Նրանք կամ բեկուներ էին ձգում նրա
սենեակը, կամ երկաթաթել, կամ դոյլի կոթ։
Այնպիսի կրովամիտ մարդուն, որպիսին էր կլօ-
դը, կարելի էր, որ բանտից այդ բաների օգ-
նութեամբ մի ելք բացանել խոր համար։ Բայց
նա այդ չարաւ։ Նա ամենը վերադարձնում էր
բանտապետին։ Յունիսի 8-ին 1832 թվի, սպանութեանից
եօթ ամիս և չորս օր յետոյ, ինչպէս երևում
է, հասաւ մեղքերի քաւութեան բոպէն քե-
ռեց Շառլ Կլուան առաջին առջիկ։
Այդ օրը, առաջանաւ Շառլ Կլուան, կլօդին
յայտնեցին, որ նրան մնում է ապրելու ընդամենը
մի ժամ։ Նրա բողոքը թողուած էր առանց հե-
տևանքի։
Այնուամենայնիւ սառը կերպով ասաց կլօդը։
«Ես լաւ կ' քննել և չեմ էլ կասկածել, որ շու-
տով առելի լաւ պէտք է քննեմ»։ Ինչպէս երե-
սակը երևում է, զօրեղ մարդկանց խօսքե-
րը մահից մօտ պէտք է անպատճառ ստանան
մի տեսակ մեծութիւն։

Եկաւ քահանան, լետոյ դահիճը։ Կլօդը խոնարհ էր քահանայի հետ, հեղ՝ դահիճի հետ։ Նա պատրաստում էր նրանց համար իւր հոգին և իւր մարմինը։ Կլօդը պահում էր հոգւոյ կատարեալ անվեհերութիւն։ Մինչդեռ նրա մագերը խուզում էին, մէկը խօսեց խոլերայից, որին սպառում էին այն ժամանակ Տրուայում։ «Ինչոր ինձ է վերաբերում, — ասաց նա ժպտալով, — ես խօներայից չեմ վախենում»։

Նա լսում էր քահանային մեծ ուշադրութեամբ, դատապարտելով իւր անձը նրա առջև շատ բանում և ցաւ յատնելով այն բանի մասին, որ իրան չեն սովորեցրել քրիստոնէական օրէնքի ճշմարտութիւնները։ Կլօդի խնդրանօք, նրան վերագարձրին այն մկրատը, որով նա իրան վիրաւորել էր։ Մկրատի մի սալը պակաս էր, նա կոտրուել էր նրա կրծքում։ Կլօդը խըդրեց բանտապետից՝ այդ մկրատը տալ Ալբէնին, նա խնդրեց նոյնպէս, որ այս ժառանգութեան վերայ աւելացնեն և այն հացի բաժինը, որ այդ օրը Կլօդը պիտի ուտէր։ Կալանառը խնդրեց նրանց, որոնք կապում էին իւր ձեռքերը, որ նրանք գթութեան քրոջ նուիրած հինգ ֆրանկանոցը, որը այժմ նրա վերջին սեփականութիւնն է, դնեն իւր աջ ձեռքում։

Առանց մի քառորդի ութ ժամին Կլօդին բանտից գուրս բերին, ինչպէս սովորաբար լինում էր, հետեղորդների ուղեկցութեամբ։

Նա գնում էր ոտքով, հաստատ քայերով, թէև դեղնած էր և աչքը չէր հեռացնում խաչելութիւնից, որ գտնվում էր քահանայի ձեռքում։

Գլխատման համար ընտրել էին Յունիսի, ութերորդ օրը, որովհետև այդ օրը վաճառքի օր էր, հարկաւոր էր, որ, ինչքան կարելի է, շատ աչքեր նայէին մահապարտին։ Փրանսիայում, ինչպէս երեսում է, կան այնպիսի կիսավարենի տեղեր, որտեղ երբ հասարակութիւնը սպանում է, նա միևնույն ժամանակ աշխատում է և պարձենալ այդպիսի գործողութիւնով։

Կլօդը բարձրացաւ կառափնարի վերայ հանդիսաւոր կերպով, առանց աչքերը հեռացնելու բեկուեալ Յիսուսի խաչից։ Կլօդը կամեցաւ համբուրել քահանային, յետոյ դահիճին՝ շնորհակալ լինելով մէկից, ներելով միւսին։ «Փ ա հ ինձ թէ թէ ա կ ի հ ը ե ց ն ր ա ն», ասուած է մի ծանուցման մէջ։

Երբ նրան կապկապեցին եղեռնական սիւնին, Կլօդը քահանային նշան արեց, որ նա հինգ ֆրանկը վերառնի իւր աջ ձեռքից և ասաց։ «Խեղճերի համար»։ Այսից բայ ուղարձ ան

Այդ իսկ բոպէին աշտարակի ժամացոյցը գար-
կեց ութ՝ ժամը և զանգակի զողանջիւնը կլան-
նեց կալանաւորի խօսքերը: Կլօդը սպասեց և
ժամացոյցի երկու հարուածների միջոցում հե-
զարար կրկնեց:

«Խեղճերի համար»:

Ութ ժամը գեռ խփած լրացած էր, երբ ազ-
նիւ, խելօք գլուխը թռւաւ ուսերից:

Հրապարակական պատժի սքանչելի գործո-
ղութիւն: Դեռ արիւնաթաթախ կոճղը կանգ-
նած էր, իսկ ամբոխը, արստեղ խռնուած, ար-
դէն վիճում էր իրարու հետ մի ինչոր սակա-
գնի մասին, և քիչ էր մնում, որ շուկայապե-
տին սպանեն: Որպիսի ժողովուրդ են կրթում
մեզ համար այդ օրէնքները:

Ենք հարկաւոր դտանք անդաշնայ որոյն
ուժականամբ ողձզու բառու ժողովն ուստի
ու լինք հարկաւոր դտանք մանրամասն պատ-
մել կլօդ Գեօֆ հետ պատահած անցքը, ողով-
հետև, մեր կարծիքով, այդ պատմութեան բո-
լոր կէտերը կարող էին տասն և իններորդ դա-
րու ժողովուրդների մեծ խնդիրը վճռող գրքի
գլուխները լինելու ժամանակայ մասն որը
Կլօդի կեանքում երկու գլխաւոր ժամանակ-
կաշրջաններ կան. մինչև նրա անկումը և ան-
կումից յետոյ: Եւ այդ երկու ժամանակաշրջան-

ների ներքոյ երկու հարց, կրթութեան հարցը
և պատժելու եղանակի հարցը. իսկ այդ երկու
հարցերի մէջտեղ կայ ամբողջ հասարակութիւն:
Այդ մարդը բնութիւնից լաւ օժտուած էր:
Ի՞նչ էր ուրեմն պակասում նրան: Մտածեցէք:
Ահա լուծելու մեծ խնդիրը, որի գեռ ևս չ'զըս-
նուած վճռից պէտք է ստացուի համաշխարհա-
յին հաւասարակշռութիւն: Թող հասարակու-
թիւնը տայ մարդուն այնքան իսկ, որքան տա-
լիս է նրան բնութիւնը:

Վեր առէք կլօդ Գեօդին: Խելօք և բարի, ա-
ռանց մի որ կէ կասկածի, բայց ճակատագիրը
ձգում է նրան այնպիսի վատ հասարակութեան
մէջ, որ նա ստիպուած է գողանալ. հասարա-
կութիւնը դնում է նրան այնպիսի վատ բան-
տում, որ նա ստիպուած է սպանել: Խսկապէս,
ով է եղերնազործը: Նմ, թէ մենք:

Դմնգակ հարց, սուր հարց, ամբողջ լուսաւո-
րեալ դասը ալժմ ճիգ է թափում նրան պա-
տասխաններու: Այդ հարցը մեր ամենքիս վեշլից
անդադար քարշում է, և մի օր մեզ այնպէս
կ'սեղմէ պատին, որ մենք ստիպուած կ'լինենք
ուղակի նայել նրա երեսին և հարցնել, թէ
ի՞նչ է ուզում նա մեզանից:

Այս տողերը գործ շաւտով կ'փորձէ, կարելի է,
մեկնել թէ ինչպէս նա հասկանում այդ հարցը:

Երբ կանգնում ես այդ փաստերի հետ երես
առ երես, երբ սկսում ես խորհել այդ մեզ ճըն-
շող հարցի վսեմովլթեան վերայ, ալամայ հար-
ցնում ես ինքո քեզ. էլ որպիսի մտածմունք-
ներ են շփոթում մեր հասարակութեան, եթէ
ոչ այդպիսի կարևոր հարցերի վճռելու մտա-
ծութիւնները:

Ո՞ւր են փոքրների համար ուսումնարաններ:
Ո՞ւր են հասակաւորների համար արհեստանոց-
ներ: Գիտէք արդեօք, որ ֆրանսիան—այն տէ-
րութիւններից մէկն է, որտեղ ամենից քիչ զը-
րագէտներ կան: Ճվեցարիան գիտէ կարդալ,
Բէլգիան գիտէ կարդալ, Դանիան գիտէ կար-
դալ, Յունաստանը գիտէ կարդալ, Իրլանդիան
գիտէ կարդալ. իսկ ֆրանսիան չ'զիտէ կար-
դալ....: Ամօթ:

Գնացէք բանտերը, դիմեցէք կալանաւորնե-
րին, չսփեցէք նրանց երևալին անկիւնը, տընդ-
դեցէք նրանց գանկը: Ամեն մէկը նրանցից ու-
նի նմանութիւն մի որ և է անաժնի: ամեն մէ-
կը նրանցից ներկայացնում է իրանից՝ մի լայտ-
նի կենդանու և մարդու մէջ եղած նմանու-
թեան միջնակէտը: Ահա կատու, ահա կա-
պիկ, ահա ուրու, ահա բորենի: Եւ այդպէս,
այդ անկանոն ստեղծուած գլուխների զրժ-
բաղդութեան առաջին յանցանքը պատկանում

է բնութեան, իսկ երկրորդը — կրթութեան:
Ցեղերը ունեն գանկեր, լաւ կամ վատ զար-
գացած, նայելով նրանց կարգաւորութեան: Հը-
ռոմակացիները և Յուները ունէին բարձր ճա-
կատ: Զափեցէք ուրեմն ժաղսկրդների երեսալին
անկիւնը:

Երբ ֆրանսիան կ'սովորէ կարդալ, չ'թողնէք
առանց ուղղութեան ձեր շնորհով զարգացած
նրանց մտաւորական ընդունակութիւնները: Այդ
նոյնպէս կ'լինի սխալ. լաւ է կատարեալ տղի-
տութիւն, քան վատ գիտութիւն: Հազար ան-
գամ լաւ է:

Յիշեցէք, որ գոյութիւն ունի Գիրք գրոց.
այդ Նիրքը—Սուրբ Գիրքն է: Ի նկատի ունե-
ցէք դուք հետևեալք. ինչ էլ որ դուք ձեռ-
նարկէք, մարդկանց մեծամասնութեան ճակա-
տագիրը միշտ կ'լինի—յարաբերական աղքատու-
թիւն, վիշտ և ամեն տեսակ ծանր աշխատանք:

Նայեցէք կշռին. հարուստների նժարումն են
բոլոր ուրախութիւնները, աղքատների նժարու-
մը՝ ամենատեսակ անբաջողութիւններ: Խօսք չը
կայ, որ այդպիսով կշռող գտնուում է անհա-
ւասարութեան մէջ, և տէրութիւնը՝ նոյնպէս:
Այժմ չքաւրաների նժարը ձգեցէք երկնալին
վարձ ստանալու հաւատոր, հաւատ, թէ կայ
Երկնալին Թագաւորութիւն. զրէք և Արքալու-

թիւնը, այդ սքանչելի հակակշխոր, և գուք կը
տեսնէք, որ նժարները կ'ոկոն ուղղուել, չքա-
ւորների բաժինը կ'լինի նոյնպէս հարուստ, ինչ-
պէս որ հարստի բաժինը:

Ահա այդ բոլորը գիտէր մեր Տէր Յիսուսը.
բայց նա գիտէր շատ աւելի, քան Վօլտերը:

Տուէք վշտակիր մշակին, որի համար այս աշ-
խարհը չունի ոչ մի փայլ, տուէք նրան, ա-
ռում եմ ես, հաւատ գէպի երանաւէտ աշխարհ,
և նա կ'լինի հանգիստ, կ'լինի համբերող. — չէ
որ համբերութիւնը յուսոյ ծնունդն է:

Եւ արդպէս, տնկեցէք Աւետարանը:

Թող ամեն մի խրճիթում մի-մի Աստուածա-
շունչ լինի:

Թող Աստուածաշունչն ու գաշտը միասին
բուսուցանեն բարոյական մշակի:

Ուամկի զլուխը — ահա հարց, ահա խնդիր:
Այդ զլուխը լիքն է օգտակար սերմերով. գոր-
ծադրեցէք նրա անելու և հստնելու համար այն
ամենը, ինչոր առաջինութիւնան մէջ ամենս-
փակունն ու ամենալաւն է:

Աս ինչ մարդը մեծ ճանապահի վերայ սպանեց.
բայց եթէ նրան յաւ կրթութիւն տուած լինէին,
նա կ'լինէր այն երկրում ամենալաւ քաղաքացի:

Ուամկի զլուխը պահանջում է ելք. սրբեցէք
նրան, ջրեցէք նրան, յուսաւորեցէք նրան, ու-
սուցէք նրան, զեղեցկացրէք նրան, օգտակա-
րութեան համար զործագրեցէք նրան, և գուք
ստիպուած չէք լինիլ կտրել նրան:

Ս Խ Ա Լ Կ Ե Ր

Եր. առշ.	Տողուած է.	Պիտի հարտաշ.
Ա— 3	աշաքհահուակ	աշխաքհահուակ
9— 5	ձեգելով	ձգելով
9—24	գիմաց-	կամակորու-
10— 3—4	կունութիւնը	թիւնը
34— 5	Հ	ոչ

2206

ՀՀ Ազգային գրադարան



NL1411792

